http://mysite.wanadoo-members.co.uk

Միջերկրածովային կրիա
(Testudo graeca)

Հազվագյուտ տեսակ է, որի թվաքանակը և բնակության արեալն արագ կրճատվում են:

Բնակության արեալը

Տարածված է Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասի հարավ-արևմտյան շրջաններում և Դաղստանում: Բացի այդ, հանդիպում է նաև Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում, ինչպես նաև՝ Հյուսիսային Աֆրիկայում, Իսպանիայի հարավում, Բալկանյան թերակղզու արևելյան մասում, Փոքր Ասիայում, Իրանում: Հայաստանում հիմնականում հանդիպում է հարավային տարածաշրջանում (Արաքս գետի հարթավայրում), նաև Իջևանի, Նոյեմբերյանի և Տավուշի տարածաշրջաններում:

Կենսակերպը և տնտեսական նշանակությունը

Բնակվում է զանազան վայրերում՝ չոր անապատներում, թփուտներով ծածկված սարերի լանջերին, նոսր անտառներում, այգիներում ու դաշտերում: Սարերում բարձրանում է մինչև 1100 մ: Սնվում է հիմնականում բուսական կերով: Ձմեռում է՝ նախապես փորելով հողը:

Թվաքանակը

Իջևանի տարածաշրջանում մեկ հեկտարի վրա հանդիպում է երկու կրիա: Հայաստանում գրանցված է մոտ 1000 կրիա:

Բազմացումը

Զուգավորումը տեղի է ունենում ապրիլ – մայիս ամիսներին: Հունիսից սկսած, ամռանը 3 անգամ ձվադրում է կատարում, դնելով 2 - 8 ձու: Այդպիսով, ամռանը մեկ էգ կրիան դնում է միջին հաշվով 16-20 ձու: Ձագերը ծնվում են երկու-երեք ամիս անց կամ հաջորդ գարնանը: Սեռահասուն են դառնում 12-14 տարեկանում:

http://www.listadodeanimales.com

Սահմանափակող գործոնները

Կրիայի թշնամիներն են՝ գիշատիչ թռչունները, նաև գետնի վրա բնակվող գիշատիչ կենդանիները: Սահմանափակող գործոններից են՝ որսագողությունը, բնակության վայրի փոփոխությունները:

Սույն հրատարակությունը իրագործվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ կողմից Նորվեգիայի Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) ֆինանսական աջակցությամբ:

ՀՀ, Երևան, 0019
Բաղրամյան պող., 24դ, 609 սենյակ
հեռ. / ֆաքս. (+37410) 523604
էլ. փոստ: office@awhhe.am

Երևան 2008